

ՀԱՎԻԻԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1971 ՏԱՐԵՆՐՉԱՆԻ

ԱԽՈՒՄ ՇՀԱՅԱԳԻՐ :

Ուրախութեամբ կը հաղորդեմ թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ մեր ծխականներու նիւթական եւ բարոյական զոհողութեան շնորհիւ բոլորած ենք յաջող տարի մը:

Մէկ տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ գործունէութիւնը:

Եկեղեցական պաշտամունքները կեղրոնք կազմելով մեր կրօնական կեանքին, ամէն Կիրակի եւ տօնական օրերուն կատարած ենք Եկեղեցական պաշտամունք եւ խօսաւուր պատշաճի քարոզ հայերէն ու Անգլերէն լեզուներով առ ի շինութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին: Մեծ Պահքի մէջ ամէն Զորեքշաբթի երեկոյեան ժամը 7ին ունեցած ենք հսկումի արարողութիւն: 1971 տարեշրջանին կատարած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները: Մկրտութիւն Յ, Պսակ Յ, Թաղում 6:

Ծնունդին եւ Զատկին կատարած ենք տնօրհնէք, իսկ Մէմորել Տէյին առթիւ օրհնած անք Հայ ննջեցեալ ներուն գերեզմանները: Վերոյիշեալ ներէն զատ այցելած ենք հիւանդներուն եւ սգաւորներուն: Առաջնորդարանի Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն նախագահած ենք Ծխական Խորհուրդի եւ Եկեղեցական կազմակերպութիւններու ժողովներուն:

Փետրուար 9 ին, Տիկին Վայըլ էթ Կալազանի եւ Տիար Եղուարդ Սիմոնեանի հետ ներկայ եղանք Քանհքը ընսակեցած ավ Զըրչի սարքած ճաշկերոյթին:

Մարտ 27 ին Սառւթ Զըրչի մէջ խօսեցայ Մեծ Պահքը Հայ Եկեղեցւոյ մէջ նիւթի շուրջ: Ապրիլ Յօ ին եւ Մայիս 1 եւ 2 ծուխիս երկու երեսփոխաններուն հետ մասնակց եցանք 69րդ. Թեմական Պատգամաւորական ժողովին որ գումարուեցաւ Գանատայի Մօնթրէալ քաղաքին մէջ:

Տունիս 18 ին Արմինելն Լիկի տուած ճաշկերոյթին ներկայ ըլլալով սեղանը օրհնեցինք: Դեկտեմբեր 8 ին ՏՀԸ Նիւ-Պրիթը ննտաստրել Մէնէմընթ Գլափի սարքած ճաշկերոյթին ներկայ եղանք եւ սեղանը օրհնեցինք:

Խօսքս Վերջացնելէ առաջ կը փափաքիմ յիշեցնել թէ Հայ Եկեղեցւոյ պայծառութիւնը կախում ունի մեր ցոյց տալիք նուիրումէն ու նախանձախնդրութենէն:

Տէրը օրհնէ համայնքիս ազնիւ ժողովուրդը եւ պարգեւէ մեզի երկնային իմաստութիւն ու բարի առաջնորդութիւն որ կարենանք ծառայել իր փառքին ու մեր Եկեղեցիին ու ազգին:

Հայոց թագավոր
Վահագան Հայոց թագավոր